ԿՐԱՍԱՐ

Վարչական ղեկավար՝ Գեղամ Գևորգյան

Հեռ: 077 48 04 92

Մակերես՝ 20.27 կմ^2

Բնակչություն՝ 500

Ինդեքս՝ 2801

krasar.shirak@mta.gov.am

Կրասար գյուղը հիմնադրվել է 1829-1830 թվականներին Խնուսից, Բասենից, Մուշից գաղթած արևմտահայերի կողմից, իսկ ավելի ուշ այստեղ են հաստատվել ընտանիքներ Ղարսի Քյորակդարա և Տալկով գյուղերից: Սկզբում այն կոչվել է Կուրդբուլաղ, Կուրտի բուլաղ, Ղուրդբուլախ, իսկ 1946 թվականից Կրասար: Գյուղից 2 կմ հեռավորության վրա, Ախուրյան գետի Աշոցք վտակի վրա կառուցված է Կրասարի եռաթռիչք կամուրջը, որը շատ նման է Կարսի նշանավոր կամրջին: Կամրջի կառուցման վերաբերյալ հավաստի տեղեկություններ կան Ղ. Ալիշանի «Շիրակ» գրքում, որտեղ նշվում է, որ այն կառուցվել է

1873թ. «Ստեփանոս Անանիկյանցի կողմից՝ «արկ վայելուչ կամուրջ եռակամար, սև և կարմիր քարամբք»: Կամրջից քիչ հեռու հայտնաբերվել է նաև քարավանատուն:

Գյուղն ունի դպրոց, բուժկետ, գրադարան:

Կրասարը Գուսան Շահենի ծննդավայրն է: